

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 8

**ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի
2018թ. մայիսի 31-ի նիստի**

Խորհրդի 42 անդամներից ներկա էին 32-ը: Նախագահում էր խորհրդի նախագահ դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը, քարտուղարում՝ խորհրդի քարտուղար Ս.Սուշյանը: Քվորումը ստուգելուց հետո խորհրդի նախագահը քվերակության դրեց օրակարգը, որը միաձայն ընդունվեց (օրակարգը կցվում է):

ՕՐԱԿԱՐԳ

1. **Գիտական հաղորդում:**
 2. **2017-2018 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):**
 3. **Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):**
 4. **2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:**
 5. **Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:**
 6. **Ընթացիկ հարցեր:**
1. **ԼՍԵՑԻՆ. Գիտական հաղորդում (զեկ.՝ դոց. Վ.Այվազյան):**

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, դոցենտ Վ.Այվազյանը հանդես եկավ ՀՀ-ում ստեղծված քաղաքական իրավիճակի, առկա խնդիրների հնարավոր սահմանադրաիրավական լուծումների վերաբերյալ գիտական հաղորդմամբ: Զեկուցողն անդրադարձավ խնդրո առարկա սահմանադրական դրույթների մեկնաբանությանը և դրանց կիրառմամբ առկա խնդիրների լուծման հնարավոր ուղիներին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Ստեփանյանը, պրոֆ. Ա.Վաղարշյանը, դոց. Ա.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

2. **ԼՍԵՑԻՆ. 2017-2018 ուսումնական տարվա պետական քննությունների արդյունքների ամփոփում (զեկ.՝ պետական քննական հանձնաժողովների նախագահներ):**

Պետական քննական հանձնաժողովների նախագահները հակիրճ ներկայացրին քննական հանձնաժողովների գործունեության արդյունքները, իրենց դիտարկումներն ու առաջարկությունները քննությունների կազմակերպման և անցկացման կարգի վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումներն ընդունել ի գիտություն (հաղորդումները կցվում են):

3. ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի հաշվետվությունը՝ ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին (զեկ.՝ ամբիոնի վարիչ պրոֆ. Վ.Ավետիսյան):

Քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, պրոֆ. Վ.Ավետիսյանն ամփոփ տեղեկություններ ներկայացրեց հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաշվետվությունը գնահատել դրական (հաշվետվությունը կցվում է):

4. ԼՍԵՑԻՆ. 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանի հաստատում:

Դեկանի տեղակալ, պրոֆ. Հ.Խաչիկյանն ընդհանուր գծերով ներկայացրեց 2018-2019 ուսումնական տարվա աշխատանքային պլանը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Հաղորդումն ընդունել ի գիտություն:

5. ԼՍԵՑԻՆ. Իրավագիտության ֆակուլտետի առկա ասպիրանտների և հայցորդների ատեստավորում:

5.1 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ Սիրո Ամիրխանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սիրո Ամիրխանյանը հաշվետու ժամանակաշրջանում ձեռք է բերել 52 կրեդիտ, ներառյալ՝ 22 կրեդիտ հետազոտողի ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 30 կրեդիտ հետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.2 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գևորգ Պողոսյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գևորգ Պողոսյանի աշխատանքը երաշխավորվել է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.3 ԼՍԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Մովսես Խաչատրյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ավետիսյանը, պրոֆ. Ա.Հայկյանցը, դոց. Դ.Սերոբյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Մովսես Խաչատրյանի աշխատանքը երաշխավորվել է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.4 ԼՍԵՑԻՆ. Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Հայկ Հարությունյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Ա.Վաղարշյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայկ Հարությունյանի աշխատանքը երաշխավորվել է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.5 ԼՍԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Գրիգոր Չոբանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ Վ.Ստեփանյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գրիգոր Չոբանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 32 կրեդիտ, այդ թվում՝ 22 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 10 կրեդիտ՝ պրակտիկայից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.6 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Տիգրան Ղազարյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Տիգրան Ղազարյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 107 կրեդիտ, այդ թվում՝ 20 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 9 կրեդիտ՝ մասնագիտական պատրաստվածության կրթամասից, 6 կրեդիտ՝ պրակտիկայից, 60 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.7 ԼՍԵՑԻՆ. Քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Առնոլդ Վարդանյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ս.Դիլբանդյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Առնոլդ Վարդանյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 50 կրեդիտ, այդ թվում՝ 20 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ՝ պրակտիկայից, 26 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.8 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի ասպիրանտ Սոսե Բարսեղյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Սոսե Բարսեղյանը հաշվետու ժամանակահատվածում հավաքել է 38 կրեդիտ, այդ թվում՝ 4 կրեդիտ՝ ընդհանուր պատրաստվածության կրթամասից, 4 կրեդիտ՝ պրակտիկայից, 30 կրեդիտ՝ գիտահետազոտական աշխատանքից, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.9 ԼՍԵՑԻՆ. Սահմանադրական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի Կարեն Հակոբյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Դոց. Վ.Այվազյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կարեն Հակոբյանի աշխատանքը երաշխավորվել է պաշտպանության, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.10 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Դավիթ Զիլֆիմյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Դավիթ Զիլֆիմյանը հաշվետու ժամանակահատվածում կատարել է բավարար աշխատանք, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

5.11 ԼՍԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Էդգար Կարապետյանի ատեստավորման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

ա/ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Էդգար Կարապետյանը հաշվետու ժամանակահատվածում կատարել է բավարար աշխատանք, ատեստավորել նրան,

բ/ միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու իրավագիտության ֆակուլտետի գիտական խորհրդի սույն որոշումը:

6. Ընթացիկ հարցեր

6.1 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական դատավարության ամբիոնի միջնորդությունը՝ ամբիոնի հայցորդ Լատրա Զոհրաբյանի թեկնածուական ատենախոսության թվանիշը փոխելու վերաբերյալ:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Գ.Ղազինյանը, պրոֆ. Վ.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա) փոխել Քաղաքացիական դատավարության ամբիոնի հայցորդ Լատրա Զոհրաբյանի թեկնածուական ատենախոսության պաշտպանության թվանիշը և սահմանել այն ԺԲ.00.04 – «Դատական իրավունք».

Բ) Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.2 ԼՄԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ասպրամ Կրպեյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Ասպրամ Կրպեյանի՝ «Ժողովուրդների ինքնորոշման իրավունքը՝ որպես հիմնարար իրավունք ժամանակակից հակամարտությունների համատեքստում» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., դոց. Վ.Քոչարյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.2 ԼՄԵՑԻՆ. Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արմեն Զաքարյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ստեփանյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հեռակա ուսուցմամբ ասպիրանտ Արմեն Զաքարյանի՝ «Հավաքական անվտանգության ժամանակակից հայեցակարգի իրացման միջազգային իրավական հիմնախնդիրները» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.06 – «Միջազգային իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.թ., պրոֆ. Վ.Հովհաննիսյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.3 ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Ալիսա Ամիրխանյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Ալիսա Ամիրխանյանի՝ «Քրեական պատասխանատվությունը ապօրինի հարստացման համար» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոց. Ա.Մարգարյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.4 ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Արգիշտի Քյարամյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Արգիշտի Քյարամյանի՝ «Քրեական պատասխանատվությունը անձնական կամ ընտանեկան կյանքի մասին տեղեկություններ ապօրինի հավաքելու, պահելու, օգտագործելու կամ տարածելու համար» վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք»:

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., դոց. Ա.Մարգարյանին:

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.5 ԼՄԵՑԻՆ. Քրեական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի հայցորդ Հռիփսիմե Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի և ղեկավարի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Ա.Գաբուզյանը, դեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Հաստատել Քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ Հռիփսիմե Խաչատրյանի՝ «Անչափահասների խմբային հանցավորության կանխարգելման հիմնախնդիրները ՀՀ-ում»

վերտառությամբ թեկնածուական ատենախոսության թեման, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.05 - «Քրեական իրավունք և կրիմինալոգիա, քրեակատարողական իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ս.Առաքելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

6.6 ԼՄԵՑԻՆ. Քաղաքացիական իրավունքի ամբիոնի միջնորդությունը ամբիոնի ասպիրանտ Սովսես Խաչատրյանի թեկնածուական ատենախոսության թեմայի փոփոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ. Պրոֆ. Վ.Ավետիսյանը, ղեկան, պրոֆ. Գ.Ղազինյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ.

Ա. Փոփոխել Քաղաքացիական իրավունքի ամբիոնի ասպիրանտ Սովսես Խաչատրյանի՝ թեկնածուական ատենախոսության թեման և հաստատել այն «Գույքի կամավոր ապահովագրության իրավական կարգավորման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետություն» վերտառությամբ, բնագավառը՝ իրավաբանական գիտություններ, մասնագիտությունը՝ ԺԲ.00.03 - «Մասնավոր իրավունք».

Բ. Գիտական ղեկավար հաստատել ի.գ.դ., պրոֆ. Ս.Առաքելյանին.

Գ. Միջնորդել ԵՊՀ ռեկտորատին հաստատելու Իրավագիտության ֆակուլտետի խորհրդի սույն որոշումը:

Խորհրդի նախագահ

Գ. Ղազինյան

Խորհրդի քարտուղար

Տ.Սուջյան

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի կողմից 13.05.2016թ-ից մինչև 30.09.2017թ. ընկած ժամանակահատվածում իրականացված ուսումնական և գիտահետազոտական գործունեության մասին

1. Ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք

ա) Դասախոսությունների անցկացման եղանակներ

Ուսումնական գործընթացը պատշաճ կազմակերպելու նպատակով ամբիոնում շարունակվել են աշխատանքները դասախոսությունների անցկացման ավանդական եղանակների արդյունավետությունը բարձրացնելու, դասախոսությունները առավել գրավիչ դարձնելու և դասավանդման ընթացքում կիրառվող մեթոդները կատարելագործելու ուղղությամբ: Առանձին թեմաներով դասախոսություններ կարդալու համար հրավիրվել են տվյալ ոլորտի առաջատար պրակտիկ մասնագետներ, մասնավորապես.

- «Արտապայմանագրային պարտավորություններ» առարկայի շրջանակներում դասախոսություն կարդալու համար հրավիրվել է գործող փաստաբան Ն.Աղաբաբյանը,
- «Արժեթղթեր» առարկայի շրջանակներում <<ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ Արմենիա>>ՓԲԸ-իցուցակման բաժնի ղեկավար Ն.Հակոբյանը:

Որոշ դեպքերում դասախոսություններ և գործնական պարապմունքներ կազմակերպվել են կոնկրետ գործառույթներ իրականացնող կազմակերպություններում, մասնավորապես ուսանողները դասախոսություններ են լսել ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ-ում՝ աշտեթղթերի շուկայի վերաբերյալ: Իրենց հետազոտության թեմաներին վերաբերող հարցերով դասախոսություններին ներգրավվել են նաև ամբիոնի ասպիրանտներ, կատարելագործվել են օգտագործվող դիտակտիկ և պրակտիկ նյութերը:

Ամբիոնի գծով դասավանդվող առարկաները հիմնականում ապահովված են ամբիոնի դասախոսների կողմից հեղինակած մայրենի լեզվով տպագիր, ինչպես նաև էլեկտրոնային տարբերակով, դասագրքերով, ուսումնական ձեռնարկներով, դասախոսության տեքստերով, մեթոդական ցուցումներով, խնդրագրքերով, թեստերով, գործնական պարապմունքի նյութերով, ծրագրերով:

Ուսումնական պրոցեսի անխափան իրականացման ռիսկերը նվազեցնելու նպատակով շարունակվել են դասավանդվող առարկաների գծով ամբիոնի անդամների վերամասնագիտացմանն ուղղված աշխատանքները:

Ամբիոնի գրեթե բոլոր անդամները զբաղված են պրակտիկ գործունեությամբ, ինչը թույլ է տալիս ուսումնական պրոցեսում ապահովել գիտություն և պրակտիկա կապը, ուսանողներին փոխանցել պրակտիկ գիտելիքներ և հմտություններ:

բ) Սեմինար և գործնական պարապմունքների անցկացման եղանակները և մեթոդները

Հաշվետու ժամանակահատվածում կատարելագործվել է սեմինար և գործնական պարապմունքների կազմակերպման գործընթացը, ուսանողների վերլուծական միտքը զարգացնելու, նրանց պրակտիկ գիտելիքներ և հմտություններ փոխանցելու նպատակով շեշտը առավելապես դրվել է խնդիրներ լուծելու, կոնկրետ գործեր ուսումնասիրելու, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական, ՀՀ Սանճանադրական և Վճռաբեկ դատարանների որոշումների վերլուծության վրա: Ուստի գիտելիքների ստուգման ձևերը կատարելագործելու նպատակով որոշում կայացվեց 2016-2017 ուս տարվա պետական քննություններն անցկացնել գրավոր ձևով՝ ներառելով խնդիրներ:

Դասավանդվող առարկաների գծով կազմված ուսումնամեթոդական ցուցումների հիման վրա ուսանողներին հանձնարարվում է կազմել պայմանագրեր, իրավաբանական անձի կառավարման մարմինների որոշումներ, իրավաբանական անձանց ստեղծման, վերակազմակերպման և լուծարման գործընթացը իրականացնելու համար անհրաժեշտ փաստաթղթեր, կոնկրետ թեմաների վերաբերյալ ռեֆերատներ, ուսանողական գիտական աշխատանքներ:

գ) Ուսումնամեթոդական ծրագրերի, հարցաշարերի, խնդիրների, տեստերի ստեղծում և նոր առարկաների ներդրում

Ամբիոնի գրեթե բոլոր առարկաները ապահովված են համապատասխան ծրագրերով, ընթացիկ, պետական քննությունների կամ ստուգման համար կազմել են հարցաշարեր, թեստեր, խնդիրներ և գրավոր առաջադրանքներ:

Մագիստրատուրայում ուսման ժամանակահատվածը կրճատելու և կրթական ծրագրերը ժամանակակից չափորոշիչներին համապատասխանացնելու նպատակով կազմվել են նոր կրթական ծրագրերի մասնավորագրերը:

2017թ., շուրջ երկու տարի տևած աշխատանքի արդյունքում, Միջազգային համագործակցության գերմանական ընկերության (GIZ) աջակցությամբ տպագրվել և ուսանողներին անհատույզ օգտագործման է տրամադրվել «Քաղաքացիական իրավունքի խնդրագիրք (լուծումներով)» ուսումնամեթոդական ձեռնարկը (համահեղինակներ՝ Ռուֆ Քնիպեր, իրավ. գիտ. դոկտոր (Մայնի Ֆրանկֆուրտի համալսարան), Բրենենի համալսարանի պաշտոնաթող պրոֆեսոր, Թբիլիսիի և Քիշնևի պետական համալսարանների պատվավոր դոկտոր, Վահրան Ավետիսյան, իրավ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր, Գրիգոր Բեքմեզյան, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ, Արսեն Թավադյան, իրավ. գիտ. թեկնածու, Սիմոն Ֆարմանյան, իրավ. գիտ. թեկնածու), որի հիման վրա փորձ է կատարվելու նոր որակ հաղորդել քաղաքացիական իրավունք առարկային դասավանդման գործընթացին:

2. Գիտահետազոտական աշխատանք

Հաշվետու ժամանակահատվածում ամբիոնի անդամների կողմից հրատարակման է հանձնվել 1 ուսումնամեթոդական ձեռնարկ՝ երաշխավորվել է տպագրության, հրատարակվել է 1 մեմագրություն, 10 գիտական հոդված, իսկ ասպիրանտների և հայցորդների կողմից 10 գիտական հոդված, հրապարակման է երաշխավորված ասպիրանտների և հայցորդների 8 գիտական հոդված:

Ամբիոնն աշխատանքներ է իրականացրել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքի փոփոխությունների հայեցակարգերի և օրենքի նախագծերի մշակման, ՀՀ արդարադատության ակադեմիայի քաղաքացիական մասնագիտացման 2016թ.

ընդունելության քննության խնդիրների կազմման, այլ բուհերի ասպիրանտների թեկնածուական ատենախոսությունների քննարկման և ասպիրանտների մասնագիտական մինիմումների ընդունման ուղղությամբ:

Պաշտպանել են թեկնածուական ատենաժողովներ ամբիոնի առկա ասպիրանտ *Արսեն Հովհաննիսյանը* «Կորպորատիվ տիպի իրավաբանական անձանց վերակազմակերպման իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ (տնտեսական ընկերությունների օրինակով)» և հեռակա ասպիրանտ *Վարդուհի Դանիելյանը* «Գործարար շրջանառությունում էլեկտրոնային ձևով կնքվող գործարքների իրավական կարգավորման հիմնախնդիրները (իրավահամեմատական վերլուծություն)» :

3. Ուսանողների և ասպիրանտների հետ տարվող աշխատանքներ

ա) ՈւԳԸ և ուսանողների հետ տարվող աշխատանքներ

Ամբիոնը ուշադրություն է դարձրել ուսանողների կողմից ՈՒԳԸ աշխատանքների կազմակերպմանը:

1. Խորհրդատվական հանդիպումներ ուսանողների հետ.

Ուսանողների հետ անցկացվել են սեմինարներ, դասախոսություններ նվիրված գիտական, դիպլոմային աշխատանք և մագիստրոսական թեզ գրելու հնտություններին, ինչպես նաև պետական քննության ժամանակ խնդիրների լուծման մեթոդաբանությանը:

2. Գիտական նստաշրջանի կազմակերպում և մրցույթներին մասնակցություն.

2017 թվականի սեպտեմբերին հրապարակվել է բրիտանական իրավաբանական խոշորագույն կազմակերպության՝ <<Allen and Overy>>-ի կողմից նախաձեռնվեց <<Աշխարհի համալսարանների համեմատական իրավունք>> (World Universities Comparative Law Project) ծրագրի շրջանակներում անգլերեն լզվով հրատարակվել է Հայաստանի իրավական համակարգի ռեյտինգավորումը աշխատանքը: Հարկ ենք համարում նշել, որ ծրագրին մասնակցել են աշխարհի տարբեր երկրներից՝ Օքսֆորդի, Ստոկհոլմի, Հելսինկիի, Փարիզի, Կոպենհագենի, Տոկիոյի, Եգիպտոսի, Չինաստանի, Պորտուգալիայի, Վենեսուելայի, Թուրքիայի, Աֆրիկական պետությունների և մի շարք այլ համալսարաններ:

Հետազոտությունը իրականացրել են իրավագիտության ֆակուլտետի ուսանողներ՝ մագիստրատուրայի ուսանողներ Լուիզա Մելիքսեթյանի, Տիգրան Դադունցի, Արփինե Առաքելյանի, բակալավրի ուսանողներ Ռուզաննա Խուդավերդյանի, Հարություն Հովհաննիսյանի և ասպիրանտ Լիլիթ Պետրոսյանի կողմից:

Ծրագիրը նախաձեռնել, կազմակերպել և ուսանողների հետազոտական աշխատանքին աջակցել են քաղաքացիական իրավունքի ամբիոնի վարիչ, ի.գ.դ., պրոֆ. Վահրամ Ավետիսյանը,

ի.գ.թ., դոց. ԴավիթՍերոբյանը, ի.գ.թ., դոց. ԳրիգորԲեքմեզյանը և ի.գ.թ., ասիստենտ ԼիպարիտԴրմեյանը:

Իրականացված

ծրագրի շնորհիվ Երևանի պետական համալսարանը կանգնեց այնպիսի հայտնի համալսարանների կողքին, ինչպիսիք են Օքսֆորդի, Ստոկհոլմի, Տոկիոյի, Հելսինկիի, Պեկինի և մի շարք այլ համալսարաններ և հնարավորություն ստացավ ծրագրի միջոցով հետագա կապեր հաստատել, մասնակցել և կազմակերպել նմանատիպ ծրագրեր տարբեր համալսարանների հետ:

2017 թ. հոկտեմբերի 2-6 տեղի է ունեցել ԵՊՀ ՈԻԳԸ 4-րդ միևազգային գիտական նստաշրջանը՝ նվիրված ԵՊՀ ՈԻԳԸ հիմնադրման 70 ամյակին: Նստաշրջանին զեկույցներով հանդես են եկել ամբիոնի ասպիրանտներ Ա.Սուրաֆյանը, Ա.Ջայրապետյանը, Ա.Ավետիսյանը, Ա.Ղահրամանյանը, Մ.Խաչատրյանը և ամբիոնի 6 մագիստրանտ:

2017թ. մայիսի 10-ին ԵՊՀ ՈԻԳԸ տարեկան նստաշրջանին քաղաքացիական իրավունք ենթաբաժնի գծով մասնակցել է 9 ուսանող:

2017թ. մարտի 18-ին և 19-ին Ջայաստանի ամերիկյան համալսարանում տեղի ունեցավ Ջայաստանի ամերիկյան համալսարանի (ՋԱՀ) իրավագիտության մագիստրատուրայի (LLM.) ծրագրի Մեդիացիոն և Արբիտրաժային Կլինիկայի և ԷյԴիԱր Փարթներս ընկերության կողմից համատեղ կազմակերպվող ամենամյա հինգերորդ խաղ-մրցույթը՝ նվիրված առևտրային արբիտրաժին: Այս տարի մրցույթին մասնակցում էին տասներկու թիմ Ջայաստանի ինը տարբեր բուհերից, այդ թվում՝ Ջայաստանի ամերիկյան համալսարանից, Ջայ-Ռուսական Սլավոնական համալսարանից, ՀՀ Ոստիկանության կրթահամալիրից, ՀՀ պետական կառավարման ակադեմիայից, ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գիտակրթական միջազգային կենտրոնից, Երևանի պետական համալսարանից, Վանաձորի պետական համալսարանից, Արտաքին տնտեսական կապերի համալսարանից և Երևանի դատական փորձագիտության և հոգեբանության ինստիտուտից:

ԵՊՀ-ն ներկայացնում էր երկու թիմ ամբիոնի անդամներ պրոֆ. Ա. Ջայկյանցի և ասիս. Ա. Թավադյանի ղեկավարությամբ: Եզրափակիչ փուլում հաղթող ճանաչվեց ԵՊՀ թիմը, ինչպես նաև «լավագույն գրավոր աշխատանք» ճանաչվեց մեր թիմի աշխատանքը:

բ) Կլինիկա

Ամբիոնի դասախոսները պարբերաբար օգնություն են ցույցաբերել կլինիկայում հերթապահություն իրականացնող ուսանողներին:

1. Ամբիոնի դոցենտ Գ. Բեքմեզյանը երրորդ և չորրորդ կուրսերի ուսանողների հետ կազմակերպել է դատական գործընթաց ընդդեմ Յուրոմ ընկերության: Գործընթացին մասնակցությունը եղել է ակտիվ՝ դասախոսի հսկողությամբ: Գործը դատարանում է, որին մասնակցում են նաև ուսանողները:

2. Արժեթղթերը ՀՀ քաղաքացիական իրավունքում առարկայի շրջանակներում ուսանողները այցելել և դասախոսություն են լսել «ՆԱՍԴԱՔ ՕԷՍԷՔՍ Արմենիա» ընկերությունում:

4. **ԻՅՅՆՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԻՍՏՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՒՆՆԵՐԻ ԿՐԻՍՏՈՒՆՆԵՐԻ**

ա) Ասպիրանտների, հայցորդների հետ տարվող աշխատանք

Ամբիոնի աշխատանքային ծրագրում հատուկ տեղ է զբաղեցնում գիտամանկավարժական կադրերի պատրաստումը: Ամբիոնն ունի 4 առկա և 12 հեռակա ուսուցման ասպիրան:

Ամբիոնում պարբերաբար քննարկվում են ասպիրանտների ու հայցորդների հաշվետվությունները, նրանց գիտական հոդվածները: Ամբիոնը նրանց աջակցություն է ցուցաբերել հոդվածների տպագրման, թեզերի պատրաստման աշխատանքների կազմակերպման և նախնական պաշտպանության հարցում:

2016թ. դեկտեմբերի 9-10-ը տեղի է ունեցել, արդեն ավանդույթ դարձած, ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանը, որին մասնակցել են ամբիոնի ասպիրանտներ և հայցորդներ: Ամբիոնի 10 ասպիրանտի զեկույցները գիտական հոդվածի տեսքով հրապարակվել են ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների տարեկան գիտական նստաշրջանի նյութերի ժողովածուում /ցուցակը կցվում է/:

բ) Ասպիրանտներին մանկավարժական աշխատանքի ներգրավում

Ամբիոնի ասպիրանտները և հայցորդները ակտիվորեն ներգրաված են ուսումնական գործընթացին: Ամբիոնի յուրաքանչյուր ասպիրանտ, բացի նախատեսված դասաժամերից, մասնակցել է նաև մյուս առարկաների թե՛ դասախոսությունների, և թե՛ սեմինար (գործնական) պարապմունքներին, ինչը նպաստելու է գիտելիքների խորացմանն ու փորձի ձեռքբերմանը:

գ) Ամբիոնի դասախոսների վերապատրաստումներ, գործուղումներ և այլ մասնագիտական գործունեություն

Ամբիոնի անդամները 2016 թ. սեպտեմբերի 19-ից 20-ը մասնակցել են «Հարավային Կովկասում եվրոպական չափորոշիչներին իրավական համապատասխանեցում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Իրավաբանական կրթության և դասավանդման մեթոդները» թեմայով սեմինար-քննարկման աշխատանքներին(Երևան, Հայաստան):

Ամբիոնի վարիչ Վ. Ավետիսյանը 2016թ. սեպտեմբերի 21-ից 23-ը մասնակցել է «Իրավաբանական ակադեմիական կրթության համատեղումը պրակտիկ գործունեության հետ» տարածաշրջանային կլոր սեղանի աշխատանքներին(Թբիլիսի, Վրաստան) :

2017թ. մայիսի 15-ից 16-ը մասնակցել է <Ժողովրդավարություն իրավունքի միջոցով> եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով), ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի և ՌԴ կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից կազմակերպած ,Արդյունավետ ընտրական մարմինները և ժողովրդավարական ընտրությունները թեմայով ընտրությունների կազմակերպման համար պատասխանատու մարմինների եվրոպական 14-րդ միջազգային կոնֆերանսին, Սանկտ Պետերբուրգ, Ռուսաստանի Դաշնություն:

Թերացումները

Վերը նշված դրականի հետ անբիոնի աշխատանքներում տեղ են գտել նաև որոշ թերություններ. մասնավորապես, անհրաժեշտ է.

- անբիոնի անդամների գիտահետազոտական ակտիվությունը բարձրացնելու նպատակով նշակել անբիոնի անդամների կողմից գիտահետազոտական ակտիվ գործունեություն իրականացնելուն նպաստող մեխանիզմներ:

Անբիոնի վարիչ

Վ. Ավետիսյան

ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՌԻՍՈՒՄՆԱՍԵԹՈՂԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ

Մենագրություն

1. *Сона Теванян*, Правовое регулирование концессионного договора, Монография, Ереван, Изд. ЕГУ, 2016, 102 стр. (электронная книга):

Գիտական հոդվածներ,

1. *Վահրամ Ավետիսյան*, Արսեն Հովհաննիսյան, Միացման ձևով վերակազմակերպվող բանկի մասնակիցների իրավունքների պաշտպանության որոշ իմնահարցեր, Դատական իշխանություն, թիվ 1-2 (211-212) հունվար-փետրվար, 2017, էջ 60-67:
2. *Վահրամ Ավետիսյան*, Բանկ հանդիսացող բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի համախմբման առանձնահատկությունները, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -197:
3. *Տարիել Բարսեղյան*, Գյուղացիական տնտեսության քաղաքացիաիրավական կարգավիճակը ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ-175:
4. *Արմեն Հայկյանց, Վարդուհի Դանիելյան*, Սպառողների իրավունքների պաշտպանությունն էլեկտրոնային միջավայրում, «Բանբեր Երևանի համալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 2 (20), էջ 58-65:
5. *Արմեն Հայկյանց* Ամուսնության կնքման պայմանները (հիմնախնդիրներ և դրանց լուծման ուղիները) ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -194-209:
6. *Դավիթ Մերոբյան*, Տնտեսական գործունեության հասկացությունը սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո. ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -235:
7. *Դավիթ Մերոբյան, Գուրգեն Մեղրյան* Տնտեսական ընկերությունների գործարքներում շահագրգռվածություն ունեցող անձանց հարցի շուրջ, Դատական իշխանություն, Երևան, 2016 4-5 (202-203) էջ 48-53:
8. *Գրիգոր Բերսեղյան*. Պատճառական կապը ղեկկցային պարտավորություններում, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ 231-242:
9. *Արսեն Թավադյան*. Վինդիկացիայի և ռեստիտուցիայի հայցերի մրցակցությունը, ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի գիտաժողովի նյութերի ժողովածու / ԵՊՀ; Գլխ. խմբ.՝ Գ.Ս. Ղազինյան.– Եր.: ԵՊՀ, 2017, էջ -256:
10. *Армен Айкянц, Евгения Гянджумян*, Генезис значения системного подхода: философско-правовые основы (Համակարգային մոտեցման զարգացումը և նշանակությունը.

իրավափիլիսոփայականհիմքեր), «ԲանբերԵրևանիհամալսարանի. Իրավագիտություն», Երևան, 2016 № 1 (19), էջ 13-21:

Ամբիոնի ասպիրանտներ`

1. **Արսեն Հովհաննիսյան**, Իրավաբանական անձի հարկադիր վերակազմակերպման արդի հիմնահարցերը Հայաստանի Հանրապետությունում, ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 149-174:
2. **Տուրինա Պետրոսյան**, Առանց ծնողական խնամքի մնացած երեխաների կարգավիճակի սահմանումը որպես նրանց իրավունքների իրացման նախապայման ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 283-299:
3. **Գևորգ Պողոսյան**, Ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող տնտեսական գործունեության որոշ առանձնահատկությունները ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 231-249:
4. **Նանե Սահակյան**, Պետական /համայնքային/ կարիքների համար կնքվող պայմանագրի իրավական բնյթը ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 299-317:
5. **Արսենուհի Չիֆրիկյան**, Զրպարտությունը և վիրավորանքն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 174-185:
6. **Սուլեսն Խաչատրյան**, Փոխադարձ ապահովագրության իրավական նախադրյալները ՀՀ-ում ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 267-283:
7. **Նարինե Ավագյան**, Հայաստանի Հանրապետությունում մտավոր սեփականության բնագավառում քաղաքացիաիրավական բարեփոխումները ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 185-200:
8. **Անի Սուրբաջյան**, Կամքի և կամահայտնության առանձնահատկությունները կեղծ և շինծու գործարքներում ԵՊՀիրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 249-267:

9. **Շուշանիկ Ղուկասյան**, „Ապրանք”, „աշխատանքների կատարում” և „ծառայությունների մատուցում” հասկացությունների իրավական բնորոշման հիմնահարցը՝ ապրանքների, աշխատանքների կամ ծառայությունների թերությունների հետևանքով պատճառված վնասի հատուցման ինստիտուտի համատեքստում ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 200-217:
10. **Մարիամ Հովսեփյան**, Կորպորատիվ կառավարման մոդելների իրավահամեմատական վերլուծություն ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու/ ԵՊՀ, իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ հրատ., 2017, էջ 217-231:

Քրեական իրավունքի.

քրեական դատավարության նկրիմինալիստիկայի ամբիոններ

2017-2018 ուս. տարվա բակալավրիատի, մագիստրատուրայի
և հեռակա ուսուցման բաժնի պետական քննությունների,
ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի
պաշտպանության մասին

Հաշվետվություն

Պետական քննություններ.

2018 թվականի ապրիլի մայիսի 15-ին տեղի ունեցավ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների պետական քննությունը «Քրեական իրավունք» և «Քրեական դատավարություն» առարկաներից:

«Քրեական իրավունք» և «Քրեական դատավարություն» առարկաներից պետական քննությունն հանձնել են 24 ուսանող

Քննությունների արդյունքներն են՝

ընդհանուր 24 ուսանող

19 միավոր_1 ուսանող

18 միավոր_3 ուսանող

17 միավոր _ 2 ուսանող

16 միավոր_ 2 ուսանող

15 միավոր_1 ուսանող

14 միավոր_4 ուսանող

13 միավոր_2 ուսանող

12 միավոր_1 ուսանող

11 միավոր_ 1 ուսանող

10 միավոր_3 ուսանող

9 միավոր _2 ուսանող

8 միավոր_2 ուսանող

2018թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ նախորդ տարիների շրջանավարտների պետական քննություն «Քրեական իրավունք» և «Քրեական դատավարություն» առարկաներից: Քննությանը ներկայացան 2 ուսանող

Քննության արդյունքներն են՝
8 միավոր - 1 ուսանող
անբավ - 1 ուսանող

Ավարտական աշխատանքների պաշտպանություն.

2018թ վականի մայիսի 17-ին տեղի ունեցավ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական իրավունք» առարկայից:

Քրեական իրավունք առարկայից ավարտական աշխատանք պաշտպանել են 10 ուսանող

Պաշտպանության արդյունքներն են՝
20 միավոր _ 1 ուսանող
19 միավոր _ 1 ուսանող
18 միավոր _ 4 ուսանող
17 միավոր _ 2 ուսանող
17 միավոր _ 2 ուսանող

2018թ վականի մայիսի 17-ին տեղի ունեցավ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական դատավարություն» առարկայից:

Քրեական դատավարություն առարկայից ավարտական աշխատանք պաշտպանել են 20 ուսանող

Պաշտպանության արդյունքներն են՝
20 միավոր _ 2 ուսանող
19 միավոր _ 4 ուսանող
18 միավոր _ 7 ուսանող
17 միավոր _ 3 ուսանող
16 միավոր _ 4 ուսանող

Մագիստրոսականատենախոսությունների պաշտպանություն.

2018 թվականի մայիսի 3-ին տեղի ունեցան քրեական իրավունքի, ինչպես նաև քրեական դատավարության նկրթի մինալիստիկայի ամբիոնների մագիստրոսական թեզերի պաշտպանությունները:

1. Քրեական իրավունք առարկայից պաշտպանել են

7 մագիստրոսական աշխատանք:

Պաշտպանության արդյունքներն են՝

19 միավոր _ 5 մագիստրոս

18 միավոր _ 1 մագիստրոս

14 միավոր _ 1 մագիստրոս

2. Քրեական դատավարություն առարկայից պաշտպանել են

3 մագիստրոսական աշխատանք:

Պաշտպանության արդյունքներն են՝

19 միավոր _ 3 մագիստրոս

2018 թվականի մայիսի 3-

ին տեղի ունեցան «Կրիմինալոգիա» մասնագիտացման մագիստրոսականատենախոսությունների պաշտպանությունները:

Կրիմինալոգիա առարկայից պաշտպանել են 7 մագիստրոսական թեզ, որոնցից 2-ը՝ փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետից

Պաշտպանության արդյունքներն են՝

19 միավոր _ 1 մագիստրոս

19 միավոր- 1 փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոս

18 միավոր _ 1 փիլիսոփայության և հոգեբանության ֆակուլտետի մագիստրոս

18 միավոր _ 1 մագիստրոս

16 միավոր _ 1 մագիստրոս

15 միավոր _ 1 մագիստրոս

13 միավոր _ 1 մագիստրոս

Հեռակա չորրորդ կուրսի կրթություն ստանալից հետո մագիստրոսական պետական քննությունների և ավարտական աշխատանքների քրեական մասնագիտացման արդյունքներ

2018 թվականի մայիսի 16-ին տեղի ունեցավ հեռակա ուսուցման բաժնի 5-

րդ կուրսի ուսանողների պետական քննությունը «Քրեական իրավունք» և

«Քրեական դատավարություն» առարկաներից:

«Քրեական իրավունք»-ն

«Քրեական դատավարություն» առարկաներից պետական քննություն հանձնել են
8 ուսանող

Քննությունների արդյունքներն են՝

ընդհանուր 11 ուսանող

15 միավոր _ 1 ուսանող

14 միավոր _ 1 ուսանող

13 միավոր _ 1 ուսանող

9 միավոր _ 3 ուսանող

8 միավոր _ 2 ուսանող

անբավարար - 3 ուսանող

2018թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ նախորդ տարիների
հեռակա ուսուցման բաժնի 5-

րդ կուրսի շրջանավարտների պետական քննությունը «Քրեական իրավունք» առարկայից
:

«Քրեական իրավունք» առարկայից պետական քննություն հանձնել են 4 ուսանող

Քննությունների արդյունքներն են՝

ընդհանուր 5 ուսանող

12 միավոր _ 1 ուսանող

9 միավոր _ 1 ուսանող

8 միավոր _ 2 ուսանող

չներկայացած _ 1 ուսանող

2018թ. մայիսի 16-ին տեղի ունեցավ նախորդ տարիների
հեռակա ուսուցման բաժնի 5-

րդ կուրսի շրջանավարտների պետական քննությունը «Քրեական դատավարություն» առ
արկայից:

«Քրեական դատավարություն» առարկայից պետական քննություն հանձնել են

3 ուսանող

Քննությունների արդյունքներն են՝

ընդհանուր 4 ուսանող

15 միավոր _ 1 ուսանող

12 միավոր - 1 ուսանող

8 միավոր _ 1 ուսանող

չներկայացած _ 1 ուսանող

2018

թվականի մայիսի

17-

ինտեղի ունեցավ հեռակա ուսուցման բաժնի ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական իրավունք» առարկայից:

Քրեական իրավունք առարկայի ցավարտական աշխատանք պաշտպանել են 3 ուսանող

Պաշտպանության արդյունքներն են՝

18 միավոր _ 1 ուսանող

16 միավոր _ 2 ուսանող

2018 թվականի մայիսի

17-

ինտեղի ունեցավ հեռակա ուսուցման բաժնի ավարտական աշխատանքների պաշտպանությունը «Քրեական դատավարություն» առարկայից:

Քրեական դատավարություն առարկայի ցավարտական աշխատանք պաշտպանել են 3 ուսանող

Պաշտպանության արդյունքներն են՝

19 միավոր _ 1 ուսանող

18 միավոր _ 1 ուսանող

15 միավոր _ 1 ուսանող

Կարելի է բարելավում արձանագրել

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի թեմատիկայի կատարելագործման առումով. դրանք ավելի արդիական են դարձել:

2. Նախորդ տարիների համեմատ՝ առաջընթաց կարելի է արձանագրել ներկայացված ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ինքնուրույնության ապահովման առումով: Դրական ցուցանիշ պետք է համարել, կարծում են, օտարալեզու, մասնավորապես, անգլերեն գրականության հաճախակի կիրառությունը: Պետք է խրախուսել այս միտումները, որովհետև միջազգային փորձի օգտագործումը այսօր օրախնդիր է:

3. Նախորդ տարիների համեմատ՝ առաջընթաց կարելի է արձանագրել նաև հեռակա ուսուցման բաժնի ուսանողների որակի բարձրացումը: Այս տարի արձանագրված գնահատականները վկայությունն են այն բանի, որ հեռակա ուսուցման բաժնի ուսանողներն ավելի շատ են սկսել աշխատել իրենց գիտելիքների վրա, հարցերին ավելի լավ են պատասխանում և ներկայացված ավարտական աշխատանքները ավելի խորը գիտական վերլուծություն են բովանդակում, քան նախորդ տարիներին էր:

4. Հատուկ անհրաժեշտ է նշել «Կրիմինալոգիա» մասնագիտացման մագիստրոսական ատենախոսությունների փայլուն պաշտպանությունը: Ուսանողները բավական լուրջ և ինքնուրույն վերլուծությունների էին իրականացրել արդիական հիմնախնդիրների շուրջ, հիմնավորել իրենց կարծիքները ինչպես տեսական գրականության մեջ առկա մոտեցումներով, այնպես էլ ինքնուրույն իրականացրած հետազոտության տվյալներով:

Մտահոգիչ է՝

1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների աշխատանքի որակը: Այս առումով մտահոգիչ է հատկապես այն, որ ղեկավարները, կարծես, բավականաչափ ժամանակ չեն տրամադրում վերոնշյալ աշխատանքների իրականացման համար, բավականաչափ չեն ուղղորդում իրենց ուսանողներին:

2. Առանձին ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գիտական վերլուծության ոչխորը լինելը: Այս առումով մտահոգիչ է հատկապես այն, որ ուսանողները չեն ուսումնասիրում հայալեզու գրականությունը և բավականաչափ խորությամբ չեն վերլուծում իրավակիրառ պրակտիկան:

Առաջարկություններ

Կարծում եմ, անհրաժեշտ է՝

1. միջոցառումներ նախատեսել ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ղեկավարների պատասխանատվությունը բարձրացնելու ուղղությամբ (լրացուցիչ վարձատրություն, անհրաժեշտ ժամանակի տրամադրում, կատարված աշխատանքի գնահատում և այլն):

2. Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետում ունենալ կուրսային, գիտական, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի էլեկտրոնային բազա, որի միջոցով հնարավոր կլինի՝

ա) իրականացնել հսկողություն և բարձրացնել նշված աշխատանքների որակը,

բ) հնարավորություն ստեղծել, որպեսզի նշված էլեկտրոնային բազայից օգտվեն ուսանողները, դասախոսները, պրակտիկ աշխատողները, ինչպես նաև ոլորտի նկատմամբ հետաքրքրություն ունեցող այլ անձինք:

*Պետական քննական հանձնաժողովին ախազահ,
Իրավաբանական գիտություններ իդոկտոր, պրոֆեսոր.
ՀՀ արդարադատության կադեմիայի իդոկտոր Ս. Առաքելյան*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2018 թվականի շրջանավարտների
պետական քննությունների արդյունքների

Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունք և քաղաքացիական դատավարություն մասնագիտացմամբ 2018 թվականի պետական քննությունները և դրանց արդյունքներն ընդհանուր առմամբ վկայում են շրջանավարտների պատշաճ պատրաստվածության մասին: Մասնավորապես, ասվածի հիմնավորումն են հանդիսանում ստորև բերված ցուցանիշները:

	ուսանող	գերազանց	լավ	բավարար	անբավ.	չի ներկ.
<i>Քաղաքացիական իրավունք և դատավարություն</i>						
<i>առկա</i>	6	-	2	4	-	-
<i>հեռակա</i>	6	-	4	-	1	1
<i>դիպլոմային աշխ. առկա (քաղ. իրավ.)</i>	20	15	5	-	-	-
<i>դիպլոմային աշխ. հեռակա (քաղ. իրավ.)</i>	2	-	2	-	-	-
<i>դիպլոմային աշխ. առկա (քաղ. դատ.)</i>	11	2	6	3	-	-
<i>դիպլոմային աշխ. հեռակա (քաղ. դատ.)</i>	1	-	-	1	-	-
<i>Մագիստրոսական թեզ</i>						
<i>Գործարարական իրավունք</i>	10	3	4	2	-	1
<i>Քաղաքացիական իրավունք և դատավարություն</i>	15	9	5	1	-	-

Ներկայացված վիճակագրական տվյալների համեմատական վերլուծությունը թույլ է տալիս որոշակի եզրահանգումներ անել բակալավրիատում (առկա, հեռակա) և մագիստրատուրայում (առկա) ուսուցման գործընթացի արդյունավետության,

ուսանողների որակի և առաջադիմության, ինչպես նաև քննաշրջանի կազմակերպչական մի շարք հարցերի վերաբերյալ: Այսպես՝ իրենց պատրաստվածությամբ առանձնացել են բակալավրիատի առկա ուսուցման՝ ավարտական աշխատանքներ ներկայացնող շրջանավարտները և մագիստրոսները: Նրանց մեծամասնությունն արժանացել է գերազանց ու լավ գնահատականների, իսկ անբավարար գնահատական չի արձանագրվել: Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի հեղինակները տիրապետում էին նյութին և կարողանում էին ոչ միայն բանավոր ներկայացնել հիմնադրույթները, այլև՝ հիմնականում սպառիչ պատասխաններ տալ առաջադրված հարցերին: Նույնը, սակայն, չենք կարող արձանագրել առկա ուսուցման՝ քննություն հանձնած շրջանավարտների և բակալավրիատի հեռակա ուսուցման շրջանավարտների վերաբերյալ: Առկա ուսուցման՝ քննություն հանձնած շրջանավարտներից որևէ մեկը չի արժանացել գերազանց գնահատականի, իսկ <<լավ>> գնահատական ստացել է ընդամենը 2 շրջանավարտ: Դարձյալ մտահոգող էր բակալավրիատի հեռակա ուսուցման շրջանավարտների որակը: Նրանցից 4-ն արժանացել է լավ, 1-ը՝ անբավարար գնահատականի, իսկ 1-ն ընդհանրապես չի ներկայացել քննության: Քննությանը չներկայանալու փաստը ևս վկայում է հեռակա ուսուցման շրջանավարտների գիտելիքների ցածր մակարդակի մասին, քանի որ, որպես կանոն, չեն ներկայանում քննությանն անպատրաստ ուսանողները: Ինչպես և նախորդ տարիների հաշվետվությունում էր նշվել՝ անհրաժեշտ է ձեռնարկել լուրջ աշխատանքներ հեռակա ուսուցման ուսանողների գիտելիքների որակը բարելավելու ուղղությամբ՝ ուսուցման ընթացքում ավելի խիստ պահանջներ ներկայացնելով վերջիններիս նկատմամբ:

Այս տարի դարձյալ քննական գործընթացն իրականացվեց նոր ընթացակարգով՝ բարձր միջին որակական գնահատական (*մոզ*) ունեցող շրջանավարտներին՝ հնարավորություն ընձեռելով ներկայացնել միայն ավարտական աշխատանք, մյուսներին՝ ըստ մասնագիտացումների՝ հանձնել մեկ բանավոր քննություն: Նշված ձևաչափն առավել ողջունելի է, քանի որ հնարավորություն է տալիս հանձնաժողովին համակողմանիորեն ստուգել շրջանավարտի գիտելիքները՝ չսահմանափակվելով միայն քննատուսի հարցադրումներով: Այդուհանդերձ, ներկայացնեմ այս գործընթացի մի շարք խնդրահարույց կողմերը, որոնց շտկումը կարող է միայն դրական ազդեցություն ունենալ քննական գործընթացի կազմակերպման և անցկացման համար:

1) Դեռևս նախորդ տարի հաշվետվություն ներկայացնելիս բարձրացրել էի իմ մտահոգությունը գրավոր ընթացակարգի կապակցությամբ: Մասնավորապես այն, որ խնդիրներն իրենց բովանդակությամբ բավականին բարդ էին, միանշանակ չէին խնդրի լուծման պատասխանները. տիպային լուծումները տարակարծությունների տեղիք էին տալիս նաև քննական հանձնաժողովների անդամների մոտ, և բացի այդ՝ ի տարբերություն բանավոր ընթացակարգի, երբ հանձնաժողովը հնարավորություն ունի հարցերի միջոցով <<ուղղորդել>> ուսանողին, որը հարցը ճիշտ չընկալելով, կարող է շեղվել թեմայից, այս ընթացակարգի դեպքում այն բացառվում էր: Բարձրացված մտահոգությունների մասին էին վկայում նաև քննական արդյունքները, երբ բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները, որոնք պատշաճ էին հանդես եկել ավարտական աշխատանքների պաշտպանության ժամանակ, ստացել էին ոչ բարձր գնահատականներ: Անշուշտ, այս պայմաններում նորից բանավոր ընթացակարգին վերադառնալը, միանշանակ ընդունելի է: Մակայն բանավոր ընթացակարգին վերադառնալիս անհրաժեշտ էր պահպանել գրավոր ընթացակարգի ձեռքբերումները: Այսպես, գրավոր ընթացակարգի դեպքում ուսանողների գիտելիքները ստուգվում էին խնդիրների միջոցով: Խնդիրները, ըստ էության, հիմնված էին ՀՀ վճարելի դատարանի քաղաքացիական և վարչական պալատի կողմից տարբեր

գործերով արտահայտված իրավական դիրքորոշումների վրա: Այս տարի քննական հարցաթերթիկը բովանդակում էր չորս տեսական բնույթի հարց, որոնք բավականին ընդհանրական էին և որոշ դեպքերում բավականին փոխկապակցված էին միմյանց: Ավելին, շատ դեպքերում նույն հարցերը կրկնվում էին հարցաթերթիկներում՝ հնարավորություն տալով քննասենյակում գտնվող մյուս ուսանողներին նախորդ ուսանողի պատասխանի հիման վրա շարադրել նաև իրենց պատասխանը: Կարծում եմ, որ հարցաշարերը պարբերաբար պետք է նորացվեն և պետք է բացառվեն կրկնվող հարցերի առկայությունը հարցաթերթիկներում: Միաժամանակ առաջարկում եմ չորս տեսական հարցի փոխարեն կամ նախատեսել երեք հարց, որից երկուսը՝ տեսական բնույթի՝ մեկական հարց համապատասխանաբար քաղաքացիական իրավունքից և քաղաքացիական դատավարությունից, իսկ երրորդը՝ իրավիճակային խնդիր՝ հիմնված ինչպես քաղաքացիական իրավունքի, այնպես էլ՝ քաղաքացիական դատավարության առանձին ինստիտուտների վերաբերյալ ՀՀ վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումներում արտահայտված դիրքորոշումների վրա կամ էլ հարցաթերթիկում սահմանել չորս հարց, երկուական հարց՝ քաղաքացիական իրավունքից, երկուական հարց՝ քաղաքացիական դատավարությունից, յուրաքանչյուրի դեպքում մեկը տեսական, մյուսը՝ գործնական բնույթի:

2) Դեռ նախորդ տարիներին իմ կողմից առաջարկվել էր դիպլոմային աշխատանք գրելու հնարավորություն ընձեռել բացառապես բարձր առաջադիմություն (18, 19, 20 միավոր) ունեցող ուսանողներին: Նման պահանջ սահմանելն առաջնահերթ պայմանավորված է այս աշխատանքի բնույթով. այն ենթադրում է տեսական ու գործնական որոշակի ուսումնասիրություն, ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկած խնդիրների վերլուծություն ու դրանց լուծման հնարավոր տարբերակների առաջադրում: Այդպիսի վերլուծություն, օբյեկտիվորեն ենթադրվում է, որ կարող են ապահովել ուսման ընթացքում բարձր առաջադիմություն ունեցող ուսանողները: Այս տարի դիպլոմային աշխատանք ներկայացնելու հնարավորություն ընձեռվել էր բարձր միջին որակական գնահատական (ՄՈԳ) ունեցող ուսանողներին, սակայն մի շարք աշխատանքների պաշտպանությունը վկայում է, որ այս գործընթացը դեռևս գտման կարիք ունի: Հասկապես մտահոգիչ էին ավարտական աշխատանքների եզրահանգումները: Որոշ աշխատանքներում կամ այդպիսիք բացակայում էին, կամ թեև առկա էին, սակայն բավականին պարզունակ էին և չունեին որևէ գիտական նշանակություն կամ էլ հայ դատավարագետների մենագրությունների կամ ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած իրավական դիրքորոշումների վերարտադրությունն էին՝ որպես սեփական եզրահանգումներ:

Այս ամենով հանդերձ՝ պետք է նշեմ, որ քննական գործընթացն ընդհանուր առմամբ անցել է բնականոն մթնոլորտում, իսկ բարձրացված հարցադրումները բացառապես նպատակաուղղված են գործընթացի հետագա արդյունավետության բարձրացմանը:

***Պետական քննական հանձնաժողովի նախագահ
Խունդկարյան***

Ե.

*ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻՆ*

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2017-2018 ՈՒՍՈՒՄՆ ԱԿԱՆՏԱՐՎԱԲԱԿԱԼ ԱՎՐԻԱՏԻ, ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻՆ ԵՎ

2-ՐԴՄԱՍՆ ԱԳԻՏՈՒԹՅԱՆ

/ՀԵՌԱԿԱՈՒՍՈՒՑ ՄԱՆԲԱԺՆԻ/ ՊԵՏԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ,

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐՈՍԱԿԱՆ ԹԵԶԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱ

ՆՄԱՍԻՆ

Պետական քննություններ:

2018թ. մայիսի 3-ին տեղի ունեցավ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների պետական քննությունը՝ Եվրոպական և միջազգային իրավունք՝ առարկայից:

Քննությանը ներկայացան 24 ուսանող, որոնցից 5 ուսանող ստացավ *զերազանց* գնահատական, 9 ուսանող ստացավ *լավ* գնահատական, 10 ուսանող՝ *բավարար* գնահատական:

2018թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ նախորդ տարիների շրջանավարտների պետական քննություն, Եվրոպական իրավունք՝ առարկայից: Քննությանը ներկայացան 3 ուսանող, որոնք բոլորն էլ ստացան *բավարար* գնահատական:

Ավարտական աշխատանքների պաշտպանություն:

2018թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ բակալավրիատի 4-րդ կուրսի ուսանողների ավարտական աշխատանքների պաշտպանությունը՝ Եվրոպական և միջազգային իրավունք՝ առարկայից:

Պաշտպանությանը ներկայացվեց 6 ավարտական աշխատանք, որոնցից 6 ուսանող ստացավ *լավ* գնահատական:

Մագիստրոսական թեզերի պաշտպանություն:

2018թ. մայիսի 10-ին տեղի ունեցավ մաքրի միջազգային իրավունք՝ մասնագիտացման մագիստրոսական թեզերի պաշտպանությունը:

Եվրոպական նախագահին
իրավունք» մասնագիտացման շրջանակներում պաշտպանության ներկայացվեց 19 մագի
ստրոսական թեզ, որոնցից 7-ը՝
ԵՊՀ նախագահին հարաբերությունների ֆակուլտետի մագիստրանտների 12-ը՝
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի մագիստրանտների կողմից:
Պաշտպանության ներկայացված 19 մագիստրոսական թեզերից 15-
ը արժանացան *գերազանց* գնահատականի, մնացած 4-ը՝ *լավ* գնահատականի:

Հեռակաուսուցման բաժին / Երկրորդ մասնագիտություն /:

2018թ. մայիսի 4-
ին տեղի ունեցավ հեռակաուսուցման բաժնի/երկրորդ մասնագիտության/ պետական քնն
ությունը, Եվրոպական նախագահին իրավունք» առարկայից:
Հեռակաուսուցման ինքնուրույն 16 ուսանող, որոնցից
4 ուսանող ստացավ *լավ* գնահատական, 10-ը՝ *բավարար* գնահատական, 2
ուսանող ստացավ *անբավարար* գնահատական:

2018թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ նաև հեռակաուսուցման բաժնի ախորդ
տարիների շրջանավարտների պետական քննություն՝ համապատասխանաբար
Եվրոպական իրավունք» և Միջազգային իրավունք» առարկաներից: Քննությանը
ներկայացան 6 ուսանող, որոնցից 3 ուսանող հանձնեցին քննություն և՛ միջազգային
իրավունք առարկայից /2 ուսանող ստացան *անբավարար* գնահատական, 1-ը՝
բավարար գնահատական/, և՛ Եվրոպական իրավունք առարկայից /1 ուսանող
ստացավ *անբավարար* գնահատական, 2-ը՝ *բավարար* գնահատական/:
Ներկայացած 6 ուսանողներից 3-ը քննություն հանձնեցին միայն Եվրոպական
իրավունք առարկայից, որոնցից 2 ուսանող ստացան *բավարար* գնահատական, իսկ
1-ը՝ *անբավարար* գնահատական:

2018թ. մայիսի 4-ին տեղի ունեցավ
հեռակաուսուցման բաժնի/երկրորդ մասնագիտության/ ուսանողների ավարտական աշ
խատանքների պաշտպանությունը՝ Եվրոպական նախագահին
իրավունք» առարկայից: Պաշտպանությանը ներկայացվեցին 2 ուսանողի
ավարտական աշխատանք, որոնցից երկուսն էլ գնահատվեցին *գերազանց*:

Ընդհանուր քննությունների արդյունքներ

*Պետականքննականհանձնաժողովինախագահ,
Իրավաբանականգիտություններիդոկտոր, պրոֆեսոր.
ՀՀսահմանադրականդատարանինախագահի տեղակալ Վ. Հովհաննիսյան*

30.05.2018թ.